Արեւմտյան Հայաստանի կառավարության ձեւավորումը ինքնանպատակ գործողություն չէ

Արեւմտյան Հայաստանի կառավարության 9-րդ տարեդարձի կապակցությամբ

Արեւմտյան Հայաստանի կառավարության ձեւավորումը (եւ ոչ միայն կառավարության, այլեւ պետական ողջ համակարգի, նաեւ խորհրդարանի ու նախագահի համակարգի) ի սկզբանե նպատակ ունի պաշտպանելու 1918, 1919-20 թթ. միջազգային ընկերակցության կողմից հայ ժողովրդին տրված իրավունքները:

Կառավարության ստեղծման գործընթացի մեկնարկը տրվել է 2001 թ. փետրվարի 4-ին: Խորհրդարանի եւ նախագահի համակարգի մեկնարկը՝ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի 2014 թ. հունվարի 18-20-ը անցկացված 1-ին գումարման 1-ին նստաշրջանում:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ձեւավորման իրավական - քաղաքական հիմքերի մաս են կազմել «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» Հռչակագրի սկզբունքներն ու դրույթները (13.09.2007 թ.), որոնց հիման վրա ստեղծվել է Արեւմտյան Հայաստանի հայերի ազգային ինքնության եւ քաղաքացիության համակարգը, ձեւավորվել՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) իրավական – քաղաքական եւ պետական կառույցը: Համաձայն Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի 21-րդ հոդվածի, ձեւավորվել են Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) իշխանության օղակները՝ Ազգային ժողովը (Խորհրդարան), Կառավարությունը եւ Նախագահական համակարգը:

2013 թ. նոյեմբերին, առաջին անգամ, համացանցում՝ էլեկտրոնային ուղղակի քվեարկության միջոցով, անցկացվել են Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի պատգամավորների ընտրություններ: Ընտրություններին մասնակցել են շուրջ 18 հազար ընտրող՝ 41 երկրներից, ընտրվել են 64 պատգամավոր:

2018 թ. սեպտեմբերի 1-5-ը կայացել են Խորհրդարանի 2-րդ գումարման ընտրություններ, որին մասնակցել են 51 հազար 500 ընտրող՝ 47 երկրից, միասնական ցուցակով ընտրել են Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 101 պատգամավոր:

Ներկայիս Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահը Ռադիկ Խամոյանն է, վարչապետը՝ Տիգրան Փաշաբեզյանը, Ազգային ժողովի (Խորհրդարանի) նախագահը՝ Արմեն Տեր-Սարգսյանը:

2014 թվականից Արեւմտյան Հայաստանի պետական համակարգի ամբողջական անվանումն է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան):

Հիշատակենք այն որոշումներն ու վճիռները, որոնք կյանքի կոչելու եւ իրականացնելու նպատակին է միտված Արեւմտյան Հայաստանի պետական համակարգի ողջ գործունեությունը: Դրանք են.

- Ռուսաստանի Կառավարության Դեկրետը (Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ) «Թուրքահայաստանի մասին» (Արեւմտյան Հայաստանի մասին), 11 հունվար 1918 թ.,
- Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից դե ֆակտո (de facto) Հայաստան պետության անկախության ճանաչումը, Փարիզի Վեհաժողովի ժամանակ, 19 հունվար 1920 թ.,
- Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից դե յուրե (de jure) Հայաստան պետության անկախության ճանաչումը, Փարիզ, 11 մայիս 1920 թ.,
- Կիլիկիայի հայերի ընդունած «Կիլիկիայի անկախության մասին» Հռչակագիրը, 4 օգոստոս 1920 թ.,
- ԱՄՆ Սենատում կայացած 1920թ. մայիսի 29-ից հունիսի 1-ը Հայաստանի մանդատի քննարկումները, ինչը նշանակում է, որ ԱՄՆ-ն դե ֆակտո (de facto) ճանաչել է Հայաստան պետության իրավունքն ու տիտղոսը հայկական տարածքների նկատմամբ եւ դրանով չեղյալ է համարել այդ տարածքների նկատմամբ Օսմանյան կայսրության իրավունքն ու տիտղոսը,
- Սեւրի խաղաղության պայմանագիրը, 10 օգոստոս 1920 թ.,
- ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճիռը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ, 22 նոյեմբեր 1920 թ.:

Այս նկատառումներից մեկնած Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) 2018 եւ 2019 թթ. ՄԱԿ-ին ուղղեց հետեւյալ դիմումնագրերը.

- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) դիմումը՝ ՄԱԿ-ին անդամակցելու վերաբերյալ, 25 մայիս 2018 թ.:
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) դիմումը՝ կյանքի կոչելու եւ իրականացնելու Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) հաստատումը ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռով սահմանազատված տարածքի վրա, 29 մայիս 2018 թ.:
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) դիմումը՝ Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի տարածքների ապառազմականացման, այնտեղից Թուրքիայի Հանրապետության բռնազավթիչ ուժերը դուրս բերելու վերաբերյալ, 20 նոյեմբեր 2018 թ.:
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) դիմումը՝ Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանազատումն իրականացնելու վերաբերյալ, 7 օգոստոս 2019 թ.:

Իրականում սա հնարավորություն եւ միջոց է լավագույն ձեւով պաշտպանելու Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Մերձավոր Արեւելքի հայ համայնքները գոյություն ունեցող սպառնալիքներից ու մարտահավերներից:

Բնականաբար, սա հնարավորություն եւ միջոց է ջանքեր ներդնելու կյանքի կոչելու եւ իրականացնելու համար հայ ժողովրդին տրված բոլոր իրավունքները: Հնարավորություն եւ միջոց է, վերջապես, հասնելու 100 տարուց ավելի առկախված Հայկական Հարցի արդարացի եւ վերջնական կարգավորմանը:

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Վարչապետ

04.02.2020 թ.

Շնորհավորում ենք Արեւմտյան Հայաստանի քաղաքացիներին, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) պաշտոնյաներին, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորներին՝ Արեւմտյան Հայաստանի կառավարության ձեւավորման 9-րդ տարեդարձի կապակցությամբ: Միասին ենք: Միասին էլ հասնելու ենք հաջողության ու հաղթանակի: